«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Էմմա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցիանվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Նախաբան .....…….....3

Խնդիրները .....…….…4

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման հնարավորությունները կերպարվեստի ուսուցման գործընթացում……...……....9

«Կերպարվեստի ժանրերը, տեսակները» թեմայի ուսումնասիրումը որպես խոսքային հաղորդակցման խթան…….……12

Եզրակացություն…….....……22

Օգտագործված գրականության ցանկ .....……...23

Նախաբան

Եթե խոսք կա, որ աշխարհ արժե, ապա ինչ արժե աշխարհն առանց խոսքի:

Գևորգ Հայրյան

Երեխայի խոսքի զարգացումը դպրոցում համարվում է մանկավարժության կարևորագույն խնդիրներից: Խոսքի զարգացումը կարևոր է երեխայի սոցիալականացման, հոգեկան զարգացման, տրամաբանական և վերլուծական մտածողության զարգացման գործում: Ներկայումս երեխաների կյանքի մաս են կազմում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնավորապես համակարգիչները, համակարգչային խաղերը, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում սովորողների խոսքային հաղորդակցման վրա:

Արդյունքում կրտսեր դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, ինչն էլ իր հերթին բերում է մեկուսացման և բանավոր խոսքի այսպես կոչված հետընթացի:

Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տալիս, որ հատկապես կրտսեր դպրոցականների մոտ անհրաժեշտ է տարբեր ռազմավարությունների կիրառմամբ նպաստել բանավոր և գրագետ կառուցողական խոսքի զարգացմանը, քանզի խոսքի մշակույթը թե՝ բովանդակության, և թե՝ դրսևորման ամբողջություն է, արժեքների համընդունված համակարգ, որի կիրառության դեպքում կունենանք կիրթ հասարակություն:

Երեխային անհրաժեշտ է սովորեցնել լեզուն հաշվի առնելով այն ընդհանուր նորմերը, որոնք սահմանել են ժողովուրդը ողջ պատմության ընթացքում: Այս նորմերը յուրացնելով երեխայի մոտ ձևավորվում են հայացքները և հենց ինքը անձը: Չէ որ մարդուն խոսքը պետք է ամեն քայլափոխի և ամեն հարցում՝ լինի դա մեծահասակ, թե երեխա:

Ուսուցման սկզբնական փուլում երեխաների մոտ բանավոր խոսքն ավելի ուժեղ է և հարուստ գրավոր խոսքի համեմատ: Այս փաստը հաշվի առնելով մենք՝

ուսուցիչներս հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնենք սովորողների բանավոր խոսքի զարգացմանը:

Հայտնի է նաև, որ բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև դասապրոցեսին ակտիվ մեթոդների կիրառումը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացում սովորողնեի մտածողության ակտիվացմանը: Դրանք բնութագրվում են սովորողների բարձր և մոտիվացիայով[7]: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսություն ուսուցչի և սովորողների, ինչպես նաև հենց սովորողների միջև, որի ընթացքում զարգանում են համագործակցային հմտություններ, խնդիրները միասին լուծելու կարողություններ, նպատակին համատեղ ուժերով հասնելու հմտություններ: Ակտիվ ուսուցման մեթոդների նպատակն է՝ սովորողներին ներգրավել ինքնուրույն գործունեության մեջ, ստեղծել շահագրգռվածություն՝ ցանկացած ճանաչողական խնդիր լուծելու համար: «Այն, ինչ կարելի է սովորել մեծահասակի կամ հասակակցի օգնությամբ, մի քանի անգամ գերազանցում է մենակ սովորելու հնարավորությունները» Լև Վիգոտսկի:

Հաշվի առնելով բազմաթիվ հետազոտությունների վերլուծությունն այն մասին, թե ինչպես են ակտիվ մեթոդներն ազդում սովորողների բանավոր խոսքի զարգացման վրա հետազոտության ընթացքում ուսուցման ակտիվ մեթոդներից դիտարկվելու է հատկապես խմբային աշխատանքի (հաշվի առնելով վերջինիս առավելությունները) և այլ անհրաժեշտ մեթոդական հնարների ազդեցությունը:

Ուստի հետազոտական աշխատանքի նպատակն է դիտարկել ուսուցման ակտիվ մեթոդների ազդեցությունը խոսքային հաղորդակցման, սովորողների բանավոր խոսքի զարգացման վրա:

Խնդիրները

Մեր խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը: Խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը, որոնք ընթանում են

երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս ուսուցիչն ընտրում է համապատասխան մեթոդները, հնարքներն ու միջոցները: Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

● Դասարանի ուսումնասիրում և աշակերտների մոտ առկա խնդիրների (այսինքն բանավոր խոսքում առաջ եկած դժվարությունների) բացահայտում:

● Անհրաժեշտ գրականության ուսումնասիրում և համապատասխան ռազմավարության ընտրություն:

● Աշակերտների համար տարբերակված, անհրժեշտ խմբային առաջադրանքների կազմում:

● Գնահատել անցկացվող դասերի արդյունավետությունը և կատարել համապատասխան եզրահանգումներ

Խոսքի մշակույթը թե՝ բովանդակության և թե՝ դրսևորման ամբողջություն է,արժեքների համընդունված համակարգ, որի կիրառության ապահովումը կիրթ հասարակության և անհատին բնութագրող երևույթ է: Բանավոր խոսքը առաջանում է հնչյուններ արտաբերելով՝ ի տարբերություն գրավոր խոսքի: Բանավոր խոսքը կամ հնչող խոսքը առաջանում է ձայնային ուղով, ի հակադրություն կինետիկ լեզվի, որն արտահայտվում է դիմախաղով և ժեստերով: «Բանավոր խոսք» տերմինը երբեմն օգտագործվում է բնորոշելու միայն ձայնային լեզուն, հատկապես լեզվաբանների կողմից, ովքեր այս տերմինի տակ ընդգրկում են վերևում նշված բոլոր երեք հոմանիշները՝ բացառությամբ կինետիկ լեզվի:

Գրավոր և բանավոր խոսքի փոխհարաբերությունը բարդ է: Լեզվաբանության մեջ, համաձայն ներկայիս տեսակետի, բանավոր խոսքը մարդուն ի ծնե տրված ունակություն է, մինչդեռ գրավոր խոսքը՝ մշակութային հայտնագործություն: Բայց և այնպես, որոշ լեզվաբաններ՝ այդ թվում և Պրահայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչներ պնդում են, որ գրավոր խոսքը և բանավոր խոսքը ունեն հստակ հատկանիշներ, որոնք իրենց հերթին վիճելի են դարձնում այն տեսակետը, ըստ որի՝ գրավոր խոսքը իր գոյությամբ կախված է բանավոր խոսքից: Երեխաներն իրենց շրջապատում օգտագործվող լեզուն լսելով ընկալում են այն որպես իրենց առաջին լեզու. լինի դա ձայնային, թե ժեստերի: Խուլ երեխաները լեզուն կարող են

նույն կերպ ընկալել նշանների կամ ժեստերի լեզվի դեպքում, եթե նրանց շրջապատում կիրառվում է տեսողական հաղորդակցության համակարգը: Ձայնային լեզուն դասավանդվում է նրանց նույն կերպ, ինչպես որ գրավոր լեզուն՝ լսելու կարողություն ունեցող երեխաներին: Ուսուցիչները հատուկ ուշադրություն են դարձնում բանավոր լեզվին այն երեխաների դեպքում, ովքեր դպրոցից դուրս օգտագործում են այլ լեզու: Բանավոր խոսքի հաղորդակցման ընթացքում արժևորվում են էթիկական, ուղղագրական-ուղղախոսական, քերականական բոլոր նորմերին հետևելու անհրաժեշտությունը, դրանք կիրառելու հետևողականությունը[1]:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են.

- ճիշտ արտահայտվելու կարողությունը,
- բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը:

Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ: Ըստ այդմ էլ, երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել.

1. խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,
2. բառապաշարի զարգացում,
3. խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը,
4. կապակցված խոսքի զարգացում (մենախոսություն և երխոսություն)
5. խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում
6. գեղարվեստական գրականության հետ ծանոթացում:

Երեխան մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Կրտսեր դպրոցականների մոտ խոսքի զարգացումն ընթանում է երկու հիմնական ուղղություններով՝ նախ՝ ինտենսիվ զարգանում է բառապաշարը և յուրացվում է ուրիշների կողմից խոսվող լեզվի ձևաբանական համակարգը, երկրորդ, խոսքը ապահովում է ճանաչողական գործընթացների վերակառուցում (ուշադրություն, հիշողություն, երևակայություն և մտածողություն):

Վեց-յոթ տարեկան երեխան արդեն կարողանում է ճշգրիտ և ամբողջությամբ նկարագրել ասվածը, և, հետևաբար, միանգամայն հասկանալի է , որ կարծիքներ արտահայտելիս երբեմն հնարավոր է բառերի ճիշտ հաջորդականության խախտումը:

Նրան ծանոթ պատմության վերարտադրումը, կատարվածի մասին սեփական պատմությունը հասանելի է կրտսեր դպրոցականին: Յոթ կամ ինը տարեկան երեխաների մոտ նկատվում է որոշակի առանձնահատկություն՝ արդեն բավականաչափ տիրապետելով բանավոր խոսքի հիմունքներին՝ երեխան կարող է խոսել ոչ թե իր մտքերն արտահայտելու, այլ պարզապես զրուցակցի ուշադրությունն իր վրա հրավիրելու համար:

Խոսքը հիմնվում է մտածողության հիմք հանդիսացող զգայական պատկերացումների վրա: Հարստացնելով երեխայի գիտակցությունը շրջապատող աշխարհի հասկացություններով, մենք զարգացնում ենք նաև նրա խոսքը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև մտածողության առանձնահատկությունները, այսինքն՝ զարգացումը պետք է ընթանա կոնկրետ մտածողությունից դեպի վերացականը, պարզից դեպի բարդը: Խոսքային գործունեության ընթացքում լեզուն հաղորդակման միջոց է: Դա նշանակում է նաև, որ երեխայի գործունեությունն այնպես պետք է կազմակերպել, որ այն նպաստի նրա խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը նշում էր, որ աշակերտի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ է լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը:

Ուստի ամենուրեք պետք է հետևողական լինել երեխայի խոսքի զարգացման Ուղղությամբ: Փորձը ցույց է տալիս, որ այն դպրոցներում, որտեղ բոլոր ուսուցիչները մեծ ուշադրություն են դարձնում խոսքի բարձր մշակույթի պահպանման վրա, սովորողների վերլուծական մտածողությունն ու բոլոր առարկաների ակադեմիական գիտելիքների մակարդակը բավական բարձր է Բանավոր խոսքի զարգացման գործընթացում պետք է շեշտը դնել այն առաջադրանքների վրա, որոնք միտված են զարգացնելու սովորողի ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը:

Տարրական դասարանի սովորողների համար շատ կարևոր է ուսուցչի խոսքը, որը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի և գրավիչ: Առաջադրանքների մեջ նախապատվությունը պետք է տալ վերլուծական, տրամաբանություն պահանջող, նկարները պատմելով վերարտադրելու և այլ նմանատիպ առաջադրանքներին:

Ուսուցիչներին խորհուրդ է տրվում.

- Հենվելով աշակերտի առաջադիմության վրա՝ կարևորել այն հմտությունները, որոնք մեծ նշանակություն են ունենում բանավոր խոսքի զարգացման գործընթացում:
- Նախքան հանձնարարություն տալը, ցույց տալ աշխատանքի օրինակները, հարմարեցրեք դասավանդումը՝ ելնելով երեխայի կարիքից:
- Ուսումնական նյութը ներկայացրեք համակարգված հերթականությամբ՝ պարզ գործողություններից անցում կատարելով դեպի ավելի բարդը:

Սովորողների մոտ բանավոր խոսքը պետք է լինի համակարգված, տրամաբանված, հստակ և արտահայտիչ: Բանավոր խոսքի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ուսոցման տարբեր մեթոդներ և հնարներ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են այն մասին, որ աշակերտների հետաքրքրությունների բարձրացման վրա էական ազդեցություն ունեն ակտիվ ուսուցման մեթոդները, քանզի վերջիններս աշակերտին դարձնում են ուսումնառության ակտիվ մասնակիցներ, իսկ դա էլ իր հերթին բերում է նրանց վերլուծական մտածողության հետևաբար նաև բանավոր խոսքի զարգացման:

Ժամանակակից կրթությունը պահանջում է դպրոցներից և ուսուցիչներից, պահպանել երեխաների մտավոր և ֆիզիկական առողջությունը, ինչպես նաև աջակցել նրանց նախաձեռնությանը, անկախությանը, փրկել այդ լավատեսական ինքնագնահատականը: Ուսուցիչը պետք է իր աշխատանքում կիրառի նորարարական մեթոդներ, լինի ստեղծագործ և հետազոտող: Ուսուցման ակտիվ մեթոդներից ընտրված է հատկապես խմբային աշխատանքը, որի դեպքում ազատ քննարկումները հնարավորություն կտան սովորողներին արտահայտել սեփական տեսակետը,կատարել համեմատություններ և վերլուծություններ, ինչն էլ իր հերթին կնպաստի բանավոր խոսքի զարգացմանը:

Խմբային աշխատանքին բնորոշ են հետևյալ առավելությունները.

- Խմբում լավ կազմակերպված աշխատանքն ուղղված է սովորողի մտավոր և ֆիզիկական առողջության պահպանմանը
- Ձևավորում են հաղորդակցության, համագործակցության, փոխադարձ օգնության հմտություններ, իսկ հաղորդակցման արդյունքում հասնում են փոխըմբռնման, ինչն էլ անհրաժեշտ է անհատի զարգացման համար

- Սովորեցնում է մասնակցել և վերահսկել իր մասնակցությունը խմբի աշխատանքին, հարգել խմբի կողմից ընդունված արժեքներն ու կանոնները, հիմնավորել սեփական տեսակետը և պաշտպանել այն: Յուրաքանչյուր սովորող հնարավորություն ունի առաջադրելու և իրագործելու իր գաղափարը, նպաստում է ստեղծագործական մտածողությանը, սովորեցնում ինքնագնահատել և ինքնաարժևորել
- Հնարավորություն է տալիս բոլորին ներգրավվելու խմբի աշխատանքին
- Խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումն ու մասնակցությունը մեծացնում է արտադրողականությունը
- փոքր խմբերի հետ միասին աշխատելը թիմի (դասարանի) հաջողության

բանալին է:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման հնարավորությունները կերպարվեստի ուսուցման գործընթացում

Հանրակրթական դպրոցում կերպարվեստի ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկը աշակերտների բանավոր խոսքի զարգացումն է: Մանկավարժական փորձը ցույց է տվել ,որ կերպարվեստի դասավանդման ընթացքում ուսուցիչը հաճախ դժվարություններ է ունենում աշակերտների հետ հաղորդակցվելիս: Դա տեղի է ունենում հատկապես առաջին դասարանում, քանի դեռ երեխաների ակտիվ բառապաշարում չեն ներմուծվել այն անհրաժեշտ բառերը, եզրույթներն ու հասկացությունները, որոնք օգտագործվում են կերպարվեստային գործունեության ընթացքում:

ՈՒսուցչի և աշակետների փոխհաղորդակցման անհրաժեշտ մակարդակ հնարառր է ապահովել «Կերպարվեստ» առարկայի ուսուցման բոլոր տարիների ընթացքում ՝ աստիճանաբար, առանց աշակերտներին ծանրաբեռնելու, և ելնելով առարկայական ծրագրի պահանջներից:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել զարգացման բնականոն ընթացքից շեղում ունեցող երեխաների իմացական գործունեության առանձնահատկությունները, պարզել, թե ինչ՞ն է խոչնդոտում նրանց, և ինչ՞պես կարելի է հաղթահարել ծագող դժվարությունները: Բնականաբար, նման երեխաների խոսքի զարգացման

սովորականից դանդաղ ընթացքը կերպարվեստի ուսուցչից պահանջվորմ է դասի բոլոր փուլերում ավելի շատ ժամանակ հատկացնել աշակերտների հետ խոսքային հաղորդակցմանը և գտնել դրա արդյունավետության բարձրացման հնարներ և ձևեր:

Կերպարվեստի դասերը լայն հնարավորություն են ընձեռնում աշակերտներին՝ բանավոր խոսքի առումով: Դա պայմանավորված է ուսումնական առարկայի կառուցվածքով ու բովանդակությամբ: Բազմաբնույթ գործունեության արդյունքում առարկայի ուսումնառության տարիների ընթացքում աստիճանաբար աշակերտի բառապաշար են ներմուծվում կերպարվեստի տեսակները, ժանրերը , դրանց աշխատանյութերը, գործիքները, աշխատաեղանակները, արտահայտչամիջոցները և այլ հասկացություններ ներկայացնող ընդարձակ բառաշարքեր, որոնց պարբերական կրկնությունը հարստացնում է աշակերտի ակտիվ բառապաշարը: Այս գործընթացում չպետք է անտեսել նաև միջառարկայական կապերի դերը: Նորություն չէ, որ կերպարվեստի դասերին օգտագործվող շատ բառեր ու հասկացություններ գործածական են նաև այլ առարկաների ՝ մաթեմատիկայի, մայրենի լեզվի, ֆիզդաստիարակության դասաժամերին: Հիշեցման կարգով կերպարվեստի ուսուցման բառացանկից ներկայացնենք բառերի որոշ խմբեր:

Գիծ-ուղիղ, թեք, հորիզոնական, ուղղահայաց, կարճ, երկար, հոծ, բարակ, ալիքաձև, զսպանակաձև, ընդհատվող, բեկվող:

Թուղթ-թղթի չափեր, ձևաչափ, թղթի դիրք, հորիզոնական, ուղղաձիգ, թղթի կենտրոն, եզր (աջ , ձախ,վերևի, ներքևի)

Չափս-մեծ, փոքր, միջին, բարձր, ցածր, կարճ, երկար:

Ձև- գնդաձև, գլանաձև, խորհանարդաձև, բրգաձև, բոլորաձև և այլն:

Գույն- գուներանգ, նրբերանգ, հիմնական, բաղադրյալ, տաք, սառը, լուսավոր, աղոտ, հնչեղ, մաքուր, պղտոր, և այլն:

Սահմանափակվենք միայն բերված օրինակներով, քանի որ մեր նպատակը ոչ թե կերպարվեստի ուսուցման ողջ մասնագիտական բառացանկի ներկայացումն է, այլ աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը, և ինչպիսի հետաքրքրաշարժ ու արդյունավետ ձևեր ու հնարներ է գտնում փոխհաղորդակցման համար:

Ասենք, որ այս գործընթացն ուսուցչի կողմից իրականացվում է կերպարվեստի առաջին իսկ պարապմունքներից և դասի բոլոր փուլերում՝

աշակերտական աշխատատեղերի կահավորում, նախապատրաստական զրույց, առաջադրանքի բացատրություն և կատարում, դասի եզրափակիչ ավարտ:

Հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկություններն ու հնարավորությունները, խորհուրդ է տրվում առաջին 3-4 առաջադրանքների բացատրությունը տանել ոչ թե միանգամից և ամբողջությամբ, այլ քայլ առ քայլ: Այսուհետև յուրաքանչյուր առաջադրանքին պետք է հետևի դրանց ընդօրինակումը աշակերտների կողմից՝ իրենց նկարչական տետրերում: Նման մոտեցման հիմքում ընկած է պարզից բարդին, հեշտից դժվարին անցնելու ուսուցման սկզբունքը:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման առավել արդյունավետ ձև կարելի է համարել ավարտուն աշխատանքների կոլեկտիվ գնահատումը, երբ յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռվում հայտնելու իր կարծիքը և գնահատականը՝ դասընկերոջ կամ սեփական աշխատանքի վերաբերյալ:

Աշակերտների միջավայրում մեծ հետաքրքրություն է ներկայացնում, երբ ուսումնական խնդրի լուծումն ուսուցչի կողմից առաջադրվում է համապատասխան անվանումը կրող վարժությունների, խնդիրների, խաղերի , զրույցների ձևով: Դասի արդյունավետությունը ավելի է բարձրանում, երբ այդ առաջադրանքներին տրվում է մրցման ձև՝անհատ աշակերտների , կամ շարքերի միջև:

Երրորդ, չորրորդ դասարաններից աշակերտներին տրվում են կերպարվեստի դասերի ընթացքում իրենց ստացած գիտելիքների, տպավորությունների մասին գրավոր ստեղծագործելու տնային հանձնարարականներ: Մեծամասնությունը ոգևորությամբ գրում է գույները, տարվա եղանակները կամ բնության այս կամ այն երևույթը բնորոշող բանաստեղծություններ, հանելուկներ, կարճառոտ պատմվածքներ:

Համապատասխան խաղերի, վարժությունների կամ հնարների կիրառման ավելի ազատ անկաշկանդ հնարավերություններ ունեն կերպարվեստի բացօթյա պարապմունքները կամ նկարելու համար կենդանի տպավորություններ ստանալու նպատակով կազմակերպվող էքսկուրսիաները:

Բացօթյա պարապմունքների ժամանակ ուսուցչի հետ աշակերտների փոխհաղորդակցումը դառնում է ավելի ազատ անկաշկանդ և երեխաներին ներշնչում է ինքնավստահություն: Դա կապված է նկարչական առաջադրանքի կատարման բնույթի և պայմանների փոփոխման հետ: Օրինակ ՝աշակերտներին

հանձնարարվում է, խմբային կամ անհատական ձևով, աշնանային բազմերանգ տերևներով գետնի վրա ստեղծել գորգ, կամ որևէ կենդանու, թռչնի կերպար: Երեխաներն իրենց կատարած աշխատանքների շուրջ կարծիքներ են փոխանակում, և զրույցի արդյունքում զարգանում է նրանց խոսքը, հարստանում է բառապաշարը: Ավելացնենք, որ բոլոր դեպքերում աշակերտների բանավոր խոսքի զարգացման արդյունավետությունն ու հաջողությունը պայմանավերված է դասավանդող ուսուցչի մասնագիտական և կազմակերպչական հմտությամբ ու վարպետությամբ:

«Կերպարվեստի ժանրերը, տեսակները» թեմայի ուսումնասիրումը որպես խոսքային հաղորդակցման խթան

Կերպավերստի դասավանդումը հանրակրթական հաստատություններում ունի կարևոր նշանակություն: Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝ իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը, սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը, ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը: Կերպարվեստը տարածական է, ժամանակի հետ ձգված չէ: Դա պահանջում է երկչափ կամ եռաչափ տարածություն: Չնայած մեր ժամանակներում, տեխնիկական հնարավորությունների շնորհիվ, ի հայտ է եկել արվեստի մի ձև, որը ներառում է ժամանակավոր տարածք (վիդեոարվեստ)[1]:

Կերպարվեստը միավորում է գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան, դեկորատիվ-կիրառական արվեստը: Ի տարբերություն տարածական արվեստների ոչ պատկերային տարատեսակների, կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում է դիտարկելի ակներև կերպարներ:

Կերպարվեստի ստեղծագործություններում պատկերված գործողությունը խտացած, կենտրոնացած է մեկ պահի մեջ, արտաքուստ ստատիկ է և չի զարգանում ժամանակի ու տարածության մեջ ինչպես թատերական արվեստում,

պարարվեստում կամ երաժշտության մեջ, սակայն դա չի խանգարում գաղափարներ մտքեր ու ապրումներ արտահայտելուն՝ չկորցնելով մեծ արվեստի իր ուժը։

1920-ական թվականներին գործում էին կերպարվեստի ճանաչված վարպետներ Մարտիրոս Սարյանը, Սեդրակ Առաքելյանը, Ստեփան Աղաջանյանը, Եղիշե Թադևոսյանը, Հակոբ Կոջոյանը։ Նրանց ստեղծագործական ավանդույթների հիման վրա Հայաստանում ստեղծվեց կերպարվեստի նոր դպրոց։ Այդ գործում բացառիկ է համաշխարհային ճանաչման արժանացած Մարտիրոս Սարյանի դերը։ Մ. Սարյանը մարմնավորել է հայրենիքի գեղեցկությունը։ Նրա կտավներին բնորոշ են վառ ու ներդաշնակ գույները, որոնք կարծես ճառագում են լույս ու ջերմություն։ Հայ քանդակագործների ավագ սերնդի ներկայացուցիչներից են Սերգեյ Մերկուրովը, Արա Սարգսյանը, Երվանդ Քոչարը։ Մերկուրովի հայտնի գործերից է 1931թ. Երևանում տեղադրված Ստեփան Շահումյանի մոնումենտը։ Արա Սարգսյանի գործերից է «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» խմբաքանդակը, որը տեղադրված է Երևանի պետական համալսարանի առջև։ Երվանդ Քոչարը նկարիչ-քանդակագործ է։ Նրա ամենանշանավոր ստեղծագործությունը Սասունցի Դավթի արձանն է Երևանի երկաթուղային կայարանի հրապարակում[2]։

Բնանկարը կերպարվեստի ժանր է, որը պատկերում է մարդուն շրջապատող բնությունը։ Կախված բնանկարի բնույթից՝ կարող ենք առանձնացնել գյուղական, քաղաքային, արդյունաբերական բնանկարներ։ Բնանակարի յուրօրինակ դրսեւորում է ծովանկարը ։ Դիմանկարը կերպարվեստի ժանր է, որը պատկերում է կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի։ Եթե արվեստագետը պատկերում է ինքն իրեն, ապա աշխատանքը անվանում են ինքնանկար։ Կրոնական ժանրի ստեղծագործություններում սյուժեն վերցվում են սուրբ գրքից։ Հատկապես տարածվեց քրիստոնեության հաստատումից հետո (4-րդ դ.)։ Դիցաբանական ժանրում արվեստագետները ստեղծագործության թեման է դառնում հեքիաթները, առասպելները, էպոսները։ Նատյուրմորտը (ֆրանս. Մեռած բնություն) պատկերում է անշունչ առարկաներ (իրեր, պտուղներ, ծաղիկներ, կահույք)։ Պատմական ժանրը ներկայացնում է պատմական անձանց, պատմական կարեւոր իրադարձություններ։

Կենցաղային ժանրն արտացոլում է մարդկանց առօրյա կյանքը, սոցիալական

եւ ազգային կացութաձեւը, սովորությունները, կենցաղը: Անիմալիստական ժանրը կերպարվեստի ժանր է, որը պատկերում է կենդանիներ (լատ. animal-կենդանի):



Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում: Գեղարվեստական գործունեություն՝ գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ: Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ: Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում՝ իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողների տպավորությունների իրատեսական, վերացական, երևակայական /2D, 3D/

հաղորդումը: Ստեղծագործական աշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն:

Արվեստի միջոցով իրականության ընկալում՝ ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրում: Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրում: Տեխնոլոգիական նորարարությունների դերը արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ:

2 Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

Կերպարվեստի ուսումնական գործունեությունը իրականացվում է խառը ուսուցման ձևաչափով ելնելով՝ թեմայի բովանդակությունից, առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները՝ համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած, արվեստի սենյակներում կամ

դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում, կարող են ընտրվել ուսումնական գործունեության այլընտրանքային տեսակներ:

Տարրական դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են օգնել սովորողներին՝

- ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում,
- կառուցել ֆիզիկական պարզ մոդելներ,
- բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,
- դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար,
- ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը՝ ձևավորելով ստեղծագործական և տրամաբանական մտածողություն,

- գտնել իր սխալները և ձգտել դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ.
- կիրառել տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,
- ճանաչի և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները և իմանա պետական տոների հիմնական բովանդակությունը,
- արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը։

Ձևավորել՝

- տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,
- սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ,
- իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,
- շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին գիտելիքներ և դրանք նկարագրելու կարողություններ,
- պարզ ուսումնասիրություններ, առաջադրանքներ, եզրակացություններ կատարելու հմտություններ,
- նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար ստեղծագործական տարբեր եղանակներ կիրառելու կարողություն,
- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու այլոց կարծիքը լսելու և արձագանքելու կարողություններ,
- ընտանեկան, խմբային, ազգային և քաղաքացիական պատկանելիության վերաբերյալ պարզ մեկնաբանություններ կատարելու կարողություններ,
- իր զգացմունքների ճանաչման, սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների արտահայման կարողություններ և յուրահատուկ լինելու գիտակցություն,
- պարզ հիմնավորումներ, ընդհանրացումներ և դասակարգումներ կատարելու հմտություններ:

Միջին դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են. Օգնել սովորողներին՝

- Ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել իր գաղափարները,
- ճանաչել տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրել դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ,
- ճանաչել և արժևորել իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ,
- մեկնաբանել և վերլուծել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները,
- իրականացնել չափումներ, կատարել մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատել արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ,
- կերպարվեստ ուսումնասիրելիս կիրառել երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքները,
- նկարագրել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածությունը.
- վերլուծել, գնահատել և առաջարկել դասակարգման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից,
- կիրառել բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար,
- ներկայացնել գիտության և տեխնոլոգիական նվաճումների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա,
- դրսևորել պատասխանատու վարքագիծ բնական ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու և շրջակա միջավայրը պահպանելու գործում,
- կիրառել տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ, կարողանալ մշակել տվյալներ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր:

Ձևավորել՝

- հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն,
- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու լսելու,և այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին հարգանքով վերաբերվել ու կարողություններ, մշակութային ընկալման և արժևորման, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ դրսևորելու կարողություններ։
- ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել իր գաղափարները.
- ճանաչել տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրել դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ.
- ճանաչել և արժևորել իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
- բացահայտել և զարգացնել իր անհատական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները,
- հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները.
- տարբերակել և համեմատել աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները.
- նկարագրել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը.
- իրականացնել չափումներ, կատարել մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատել արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և գործիքներ.
- որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը և գտնել խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատել դրանք.

- կիրառել բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար. - դրսևորել հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակել և իրականացնել նախագծեր.
- ճանաչել իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորել ինքնազարգացմանը միտված վարքագիծ։

Ձևավորել՝

- արվեստի միջոցով ստեղծագործաբար դրսևորել մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ.
- տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ կիրառելու, տվյալներ՝ անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր օգտագործելով տվյալներ մշակելու հմտություններ.
- սեփական տեսակետը և դիրքորոշումը արտահայտելու, հիմնավորելու և պաշտպանելու կարողություններ.
- թվային տարածքում ապահով գտնվելու կանոններին տիրապետելու, օնլայն հաղորդակցության էթիկան պահպանելու, անձնական տվյալների գաղտնիության կանոններին տեղյակ լինելու և դրանք կիրառելու, յուրաքանչյուր անձի անձնական տարածք (ֆիզիկական և հոգեբանական) ունենալու իրավունքն ու անհրաժեշտությունը մեկնաբանելու հմտություններ.
- համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները ներկայացնելու և քննարկելու կարողություններ.
- իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները գնահատելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտություններ.
- անհրաժեշտ տվյալներ ստանալու, վարկածներ առաջարկելու, վերլուծելու, գնահատելու և ներկայացնելու կարողություններ.

- մասնագիտական կրթության հնարավորությունների վրա հիմնված նախնական ինքնորոշում կատարելու կարողություն:

Կերպարվեստի տեսակները, ժանրերը թեմայի դասավանդման ընթացքում աշակերտները պետք է կարողանան նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը, նկարագրել արվեստի ստեղծագործությունները, մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը, մեկնաբանել և վերլուծել՝ինչն է հավանում, ինչը՝ ոչ, ներկայացել կարծիք, խոսել արվեստի և ստեղծագործելու մասին, խմբավորել և մեկնաբանել ստեղծագործություններն ըստ տեսակների, տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները, ճանաչել, տարբերել և գնահատել հայկական արվեստը ներկայացնող աշխատանքները, բացատրել, թե ինչո՞ւ է արվեստը ժամանակից դուրս:

Դասի ընթացքում աշակերտները դասակարգում են ստեղծագործություններում հադիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես): Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում պատկերված ազգային ինքնություն արտահայտող առարկաները: Ուսումնասիրել ստեղծագործություններն ըստ ոճական առանձնահատկությունների: Որոշել ե՞րբ են ստեղծվել դրանք: Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը: Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը, կատարված «Խոսքային հաղորդակցում» թեմայով, հաջողված է, ինչի մասին վկայում են հետազոտության ընթացքում ստացված արդյունքները և սեփական դիտարկումները և սովորողների կարծիքները:

Հետազոտության ընթացքում բացի խմբային աշխատանքներից կատարվել են նաև աշխատանք զույգերով, «Գեղեցիկն ու Ճշմարիտը» մեթոդը, «Գտիր զույգը» մեթոդական հնարը, տարբեր հարցադրումներ և այլ մեթոդներ, անհատական աշխատանքներ, անհատական մոտեցում է ցուցաբերվել այն աշակերտներին, ովքեր դժվարություններ են ունեցել նոր նյութի յուրացման ընթացքում, խոսքային գործունեություն ծավալելիս, սեփական մոտեցումներն ու եզրահանգումներ կատարելու աշխատանքներում:

Ճիշտ է, խմբի աշխատանքը ներկայացրել է տվյալ խումբը, բայց հարցերի քննարկումները արվել են ամբողջ դասարանի կողմից՝ խոսքի զարգացման, ճիշտ հաղորդակցման, առողջ համագործակցային մթնոլորտ ստեղծելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Աբաջյան, Ա Ավագյան և ուր. (2016). Աբեղյանական ընթերցումներ. Երևան:ԵՊՀ հրատ., էջ 288:

2. Զրույցներ արվեստի մասին https://old-lib.armedu.am

3. Հովհաննիսյան, Ա. և ուր.(2006).Համագործակցային ուսուցում. Երևան:Անտարես, էջ 124:

4. Զրույցներ հայկական կերպարվեստի մասին/ Պերճ Համազասպի Գրիգորյան / Լույս,198

5. Бахтиярова, А., Муссина А.(2018) Групповая работа как эффективная форма организации урока в условиях повышения качества образования и воспитания. ГУ СОСШПА, №7 г. Павлодара.

6. Гикал, Л.(2008/2009). Групповая работа как эффективная форма организации урока. Фестиваль педагогических идей «Открытый урок» .

7. Зарукина,Е. В., Логинова Н. А., Новик М. М.(2010). Активные методы обучения: рекомендации по разработке. Санкт-Петербургский государственный инженерно-экономический университет 2010, СПб.:-59 с.

8. Н.И. Пометова, (1984), Развитие речи учащихся начальных классов. Пособие для учителя. Москва. Просвещение.

9. Coe, (2014). What makes great teaching? Review of the underpinning research. London: Sutton Trust: